

ՕՐՈՒԱՆ ԳԻՐՔԵՐ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

ԳԼԱՋՈՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐ
ՀԱՅ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՏՔԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՋ
(ԺԳ-ԺԴ ԴԱՐ)

Գրեց

ԼԵՒՈՆ Գ. ԽԱՋԵՐԵԱՆ

Երևան, «Լոյս» Հրատ. 1973, էջ 232:

Վերջին քանի մը տարիներու ընթացքին, Երևանեան Հրատարակութիւններու ամէնէն ուշադրաւ եւ մեծարժէք հատորներէն մէկը կարելի է նկատել Լ. Գ. Խաչերեանի՝ ԳԼԱՋՈՐԻ միջնադարեան կրօնական հաստատութեան նուիրուած՝ մենագրական այս լուրջ աշխատութիւնը:

Տարիներ առաջ, Խաչերեան Հրատարակած ըլլալով Եսայի Վրդ. Նշեցիկի «Վերլուծութիւն Քրիստոնեական» կոչուած աշխատութիւնը (տպուած Երևան, 1966ին), առիթն ունեցած էր արդէն անուղղակիօրէն անդադարաւորաբար՝ Գլաճորի վանական հաստատութեան կրթական բացառիկ դործունէութեան շուրջ: Ներկայ հատորով, պատուական Հեղինակը առանձին ուսումնասիրութեան նիւթ դարձուցած է Գլաճորի վանքին, այսպէս կոչուած՝ Միջնադարեան Համալսարանը: Խաչերեանի դովելի նպատակը, հետեւաբար, եղած է յայտնարեւել այն բոլոր կարեւոր սկզբնաղբիւրները, պատմական անցքերն ու դէմքերը, որոնք ո՛րեւէ օղակով կրնային նպաստ մը բերել այս հանրածանօթ հաստատութեան մշակութային պատմութեան:

Հատորը պատրաստուած է, անկասկած, ճանական աշխատանքի մը պահանջած բոլոր լրջութեամբ, պրպտելով եւ ուսումնասիրելով հայագիտական բազմաթիւ մենագրութիւններ եւ ուսումնա-

սիրութիւններ, եւրոպական լեզուներով հրապարակի վրայ դոնող միջնադարեան համալսարաններու առնչութեամբ կատարուած կարեւոր հրատարակութիւններ եւ ձեռագրային բազմազան աղբիւրներ:

Ծանօթ է՝ թէ մեր աղգային մշակութային մեծագոյն կեդրոններէն մէկն է եղած Գլաճորի կրօնական - կրթական հաստատութիւնը, որու մասին ժամանակին անդրադարձած են արդէն՝ մասնաւորապէս Լ. Գ. ԱԼԻՇԱՆ (Սիսակամ, Վենետիկ 1893, էջ 119-137 եւ 251-252), ԳԱՐԵԳԻՆ ԿԹՂ. ՅՈՎԱԿԻՄԻԱՆ (Խաղապետի կամ Պոռնիամի Հայոց Պատմութեան մէջ, Բ. տիպ, Անթիլիաս 1969, էջ 251-296), ՍԻՐԱՐՓԻ ՏԵՐ-ՆԵՐՍԵՍԻԱՆ (Manuscripts arméniens illustrés des XII, XIII et XIV siècles, Վենետիկ 1936, էջ 110-136), Լ. ԽԱՋԻԿԵԱՆ (Գլաճորի Համալսարանը եւ Երա սանքի աւարտական ատենախօսութիւնները, Պետական Համալսարանի գիտական աշխատութիւնների ժողովածու, Երևան 1946, Թ. ԻԳ., էջ 423-450), Ա. ԱԻՏԻՍԵԱՆ (Հայկական մանրանկարչութեամբ Գլաճորի դպրոցը, Երևան 1971), Ա. ՄՈՎՍԻՍԻԱՆ (Ուրուագծեր հայ դպրոցի եւ մանկավարժութեամբ պատմութեամբ, Երևան 1958, էջ 161-200): Սակայն, որքան ծանօթ է մեզի, Գլաճորի համալսարանը, իրեն միջնադարեան կրօնական եւ կրթական բարձրագոյն հաստատութիւն, իր բոլոր առանձնայատկութիւններու եւ յատկանիշներու բացայայտումով եւ ամբողջական ու բազմակողմանի ընդգրկումով, լուրջ հետազոտութեան մը առարկայ չէր եղած տակաւին:

Այս ուղղութեամբ, Խաչերեանի կողմէ կատարուած դժուարին այս աշխատանքը, դրական փորձ մը պէտք է նը-

կատուի, անկասկած, որ կը ձգտի լրացնել այդ կարեւոր բացը:

Հակառակ, սակայն, Խաչերեանի աշխատութեան ճանական տարադին, հատորը կը պարունակէ վիճելի անկիւններ եւ տակաւին լուսարանութեան կարօտ բազմաթիւ կէտեր: Դժուար է, բնականաբար, դրախօսել նման աշխատութեան հատոր մը, որովհետեւ մեզի տրամադրուած այս քանի մը էջերը անբաւարար պիտի ըլլային՝ տալու ճշգրիտ բնորոշումն ու արժեքաւորումը ընդարձակ եւ յաճախ մթին այն պատմական հարցերուն, որոնցմով լեցուն է յարաբերաբար փոքր այս հատորը:

Ծանօթ են՝ ֆ. Անթրեանի քիչ մը ուժեղ, սակայն թերեւս մասամբ արդար ճանաչատականը, որ երեւցաւ Բանքեր Երևանի Համալսարանի Թ. 2-ի մէջ, 1974, եւ Խաչերեանի իսկ պատասխանաբացատրականները միեւնոյն պաշտօնաթերթին մէջ (1975, Թ. 3):

Ներածութեան մէջ, Հեղինակը կը պարզէ իր նպատակն ու մեթոտը՝ որով փորձած է իրագործել իր աշխատանքը՝ Ամէնէն առաջ, հարկ կը նկատէ ճանական վերլուծումի մը ենթարկել Յիշատակագրութիւններն ու Յիշատակարանները, եւ այս բոլորը տարբեր տեսանկիւններէ դէտեկ, որպէսզի համակողմանիօրէն եւ հնարաւոր խորութեամբ լուսարանուին տարած հարցեր: Հեղինակը անհրաժեշտ կը տեսնէ նաեւ ուսումնադիտական այս կարեւոր կեդրոնին բոլոր ենթադրուած գեղասագիւրքերը՝ վերակադմել եւ անոնց կոթնելով՝ առարկայականօրէն դասընթացները բնորոշել:

Նոր կը թուի, անշուշտ, այս ուղին, ուղի մը՝ որով դասընթացներու դասաւորումն ու անոնց բնութագրումը վերլուծելով, Գլաճորեան դրական դործունէութեան եւ Հայ ընդհանուր մատենագիտութեան մասին ուսումնասիրութիւն մը տրուի: Դարձեալ, Գլաճորի թիւն մը տրուի: Դարձեալ, Գլաճորի կրթական կեդրոնի համալսարանական եւ բնոյթը դիտականօրէն փաստարկելու եւ հիմնաւորելու համար, անհրաժեշտ էր, անշուշտ, համեմատական զանազան եղբր գտնել: Խաչերեան, այս ուղղու-

թեամբ, փորձած է նկատի առնել Գլաճորի ժամանակակից եւրոպական համալսարանները, եւ կը համարի դատարար ընդհանուր դիմել եւ առանձնապատկութիւններ, որոնք, Հեղինակին համաձայն, մեր Գլաճորի հաստատութեան ալ յատուկ կը թուին ըլլալ: Ուրեմն, այն սահմաններն ու բացատրութիւնները, որոնք միջնադարեան համալսարաններու մէջ կը կիրարկուէին, նոյնքան ընդհանուր դիմելով, կը դործածուէին նաեւ Գլաճորեան դասընթացներու ժամանակ: Ուրիշ խօսքերով՝ Գլաճորը, իր բոլոր յատկանիշներով, կ'եզրակացնէ Խաչերեան, կը համապատասխանէ միջնադարեան ա'յն համալսարանական հաստատութիւններու բնոյթին, ու մակարդակին, որոնք կարեւոր դեր մը ունեցած են Երաւայի մէջ Վերածնունդի դարաշրջանը նախապատրաստելու եւ զարգացնելու գործին մէջ: Նմանապէս, ինչպէս նկատուի բոլոր համալսարաններու եւրոպական բոլոր վերջնական լրագրութեան մէջ, իրենց վերջնական (doctorat) բովանդակութեամբ կը գտնուին, ասորհմանի տուչութեամբ կը գտնուին, նոյնը կը տեսնենք նաեւ Գլաճորի Դպրատանին մէջ:

Գնահատանքէ վեր են, անտարակոյս, Հեղինակին կատարած անսպառ պրպտութիւնները, սակայն մեզի այնպէս կը թուումները, որ Խաչերեանի թէ պատշաճ պիտի ըլլար Երաւայի մէջ Վերածնունդի դարաշրջանը դիտարկելու ներկայացնել նման կենսոտ դիտարկի ներկայացնել յիշատակագրութեան վերջնականօրէն չլրացանաւ հարցեր, քանի որ դասընթացներու եւ Գլաճորի բազմաճիւղ լրագրութեան մասին, Հեղինակն իսկ կ'ախորհարարէ ըսելով, Հեղինակը համալսարանի ուսումնաթէ «Գլաճորի համալսարանի ուսումնական բաժիններէ մասին ուղղակի ո՛չ մի տուեալ չունենք» (էջ 90):

Աշխատութեան Առաջին գլուխը, որ առաւելաբար լեցուն է պատմական բարդ հարցերով, կը ներկայացնէ «Գլաճորի Համալսարանի ստեղծման պատմութիւնը՝ ձեռագրական սկզբնաղբիւրների հետ» (էջ 11-89): Նուիրուած տագոտութեամբ, Գլաճորի սկզբնական է, հետեւաբար, պատմութեան: Մեզի հաստատութեան պատմութեան, Մեզի հասած ձեռագրական աղբիւրներու մէջ, Գլաճոր անունով երկու վանական հաս-

տատուութիւններ կը յիշուին. առաջինը՝ Մուշի Սուրբ Առաքելոց վանքն է, որ կոչուած է նաեւ Գլաձոր կամ Գայլիձոր վանք, ուր Ներսէս Մշեցի Վարդապետը կը գործէր († 1284), իսկ երկրորդը՝ Վա- յոց Զոր գաւառին մէջ (Սիւնիքի նա- չանդ) գտնուող Աղբերց կամ Աղբերաց վանքն է՝ ուր, երբ Ներսէս Մշեցին, 1280ական թուականներուն, իր Եսայի Նչեցի աշակերտին հետ, հաստատուելու եկաւ, իրենց հայրենի վանքին յիշատա- կով՝ Աղբերց վանքն ալ կոչուեցաւ Գլա- ձորի վանք:

Աղբերց վանքը՝ ԳԼԱԶՈՐ վերակո- չուածով կը յիշուի 1291 թուականին: Այս զոյգ անուններն ալ, մինչեւ ԺԳ. դարու վերջաւորութիւնը, փոխադարձաբար կի- րարկուած են Յիշատակարաններու մէջ: Միայն այդ շրջանէն յետոյ է որ լոկ Գլաձոր անունով սկսած է յիշուիլ եւ Աղբերց անունը բոլորովին քաշուած է հրապարակէ: Գլաձորի հաստատութիւնը հետզհետէ վը դառնայ կրթական հան- րածանօթ կեդրոն եւ կը յաջորդի ստանալ «Գիտութեամ եւ իմաստութեամ մայրա- քաղաք», «Երկրորդ Աթէնք» եւ «Իմաս- տութեամ գան» տիտղոսները: Գլաձոր առաջին անգամ «համալսարան» կոչուած է 1321ին:

Ուշերեանի դործին այս առաջին դը- լուիւր, կը զգացնէ, կարծէք, իր կողմէ կատարուած ճիշդ մը՝ առաջ մղելու Գլա- ձորը եւ նկատելու զանիկա միջնադար- եան հայ բարձրագոյն կրթարանը, մա- նաւանդ թէ՛ «համալսարան»։ Իր այս եղբայրացութիւնը, չըսելու համար նախ- ընտրութիւնը՝ որ նախադիր մեկնակէտ մը կը թուի ըլլալ, կը հիմնաւորէ գըլ- խաւորաբար սա կէտերուն վրայ:

Ա) Քանի որ Գլաձորի դպրոցին չըր- ջանաւարտները կատարած են աւարտա- ճառեր, ուրեմն պէտք է այդ հաստատու- թիւնը նկատել «համալսարան»:

Բ) Քանի որ Գլաձոր հաստատութիւնը կոչուած է «Իմաստութեան մայրաքա- ղաք», «Երկրորդ Աթէնք» եւ «Համալը- սարան», ուրեմն այս կոչումներու կի- րարկումը զգայմանաւորուած է համա- լսարանի համարժէքով ու նշանակու- թեամբ (էջ 72):

Պատմական յայտնի մեղանշում մը պիտի ըլլար, անշուշտ, եթէ մերժէինք Գլաձորի կրթական դործունէութեան բա- ցառիկ ու ցայտուն հանդամանքը, որուն «համալսարան» անուանումը Գլաձորի իսկ աշակերտներուն կողմէ՝ հասկնալի է եւ անտարակոյս արժանի է յատուկ ուշադրութեան. սակայն, կը խորհինք թէ նման կոչում մը, պարզապէս իրրեւ կոչում, կարելի է լրջօրէն քրոշիլ հա- մարիլ: Հայաստանի մէջ, Միջին դա- րուն, արդեօք մերօրեայ առումով կի- րարկուած է «համալսարան» եզրը, երբ նկատի առնուին Սիւնիքի Վարդապետա- րանին, Շաղատի Դպրոցին (միշտ Սիւ- նիքի նահանգ), Հաւուց Թառի, Տաթևի, Խոր Վիրապի եւ ուրիշ բազմաթիւ կըր- թական ակումբներու առընչութեամբ կա- տարուած համանման արտայայտութիւն- ները մեր պատմիչներու եւ Յիշատակա- րաններու մօտ: Նոր Հայկազեան Բառա- րանին մէջ (տպ. Վենետիկ) նշուած քա- նի մը օրինակներէն (հմտ. Համալսա- րան բառը), կարելի է հեշտօրէն հետեւ- ցնել՝ Միջին դարուն մեր մօտ դործած- ուած «համալսարան» եզրին իմաստը: Այդ վկայութիւններէն ա՛յնպէս կը թը- ւի, թէ հին Կրթարաններն ալ երբեմն «համալսարան» կոչուելը են, առանց սա- կայն վերադարձուլ անոնց՝ միջնադարեան կամ մանաւանդ մերօրեայ համալսարան- ներու բարձրագոյն նշանակութիւնը: Շատ ճշգրիտ կը դտնենք Հ. Վարդան Հացու- նիի՝ «Համալսարան» յորձորը մին առ- ւած նշանակութիւնը. «Ոսկեդարը, կը գրէ հմուտ Վարդապետը, սովորաբար դպրոց կը կոչէ եկեղեցականաց դաս- տիարակութեան վայրը... երբեմն նաեւ վարդապետանոցը... իսկ Միջին դարը կը գործածէ՝ բոլորովին ըստ քիմս՝ ա- շակերտարան, վարդապետարան կա մ բարունարան, (նաև) համալսարան»՝ գոր- ծունէութեամ աւելի ընդարձակ իմաս- տով, ինչպէս Նչեցուցն է...» (Գաստիա- րակոյսիմ հիմ Հայոց քով, Վենետիկ 1023, էջ 213-214, ընդգծումը մեզմէ):

Հաւուց Թառի վանքը (Սիւնիքի նա- չանդ), ինչպէս Անթարեանն ալ անդրա- դարձուցած է իր քննադատականին մէջ,

Գլաձորէն շատ առաջ սկսած է իր կըր- թական դործունէութիւնը եւ կրած է նմանապէս «համալսարան» կոչումը. այդ պարագային Հաւուց Թառ Դպրոցն ալ պէտք ենք «համալսարան» նկատել... (Հմտ. նաև ՄՈՎՍԻՍԵԱՆ Ա., յիշ. դրծ. էջ 276-278: ՅՈՎՍԵՓԵԱՆՑ ԳԱՐ. ԱՐԲ., Հաւուց Թառի Ամենափրկիչը եւ Ոռնա- մուռ յուշարձանները հայ արուեստի մէջ, Երուսաղէմ, 1937, էջ 29):

Նոյն գլուխին մէջ, Աղբերց վանքի եւ Գլաձորի հաստատութեան առընչու- թիւնները շատ յստակ չեն պարզաբան- ուած: Կը կարօտին անդրադոյն լուսա- րանութիւններու: Տեղագրական ծանո- թութիւնները, նմանապէս, զոհացուցիչ չգտանք, իսկ առանց այդ ծանօթութիւն- ներուն, շատ դժուար է որ ընթերցողը կարենայ համոզուիլ զոյացնել Աղբերց- Գլաձոր առընչութիւններու մասին:

Հայագիտական զբաղմունքեան մէջ կարծիք մըն ալ ձեւացած է, որուն հա- մաձայն Գլաձորի եւ Թանահատի վան- քերը կը նոյնանան: Այս կարծիքը՝ առա- ջին անգամ հրապարակ իջած է հայխօս Երուանդ Լալայեանի կողմէ 1905 թուա- կանին եւ ունեցած է հետեւորդներ (էջ 15), որոնց կարգին կարելի է աւելցնել նաեւ վաստակաւոր Վեր. Եղիա Գասու- նին (հմտ. Պատմութիւն Հիմ Հայ Գաս- տիարակութեամ, Պէյրութ, 1959, էջ 249): Ոմանք թիւրիմացութիւն կը նկա- տեն այս կարծիքը. այսպէս կը խորհի- նաեւ մեր գիրքին հեղինակը՝ Ուշեր- եան, որ կը ժխտէ Թանահատի վանքին նոյնութիւնը Գլաձորի հետ: Ժիշտ է, այս ուղղութեամբ պատմութիւնը ժլատ է եղած, ուստի կը պակսին բացայայտ վկայութիւններ եւ փաստաբեկումներ, սակայն վը խորհինք թէ այս հարցը դիւրին չէ փակուած նկատել, մանաւանդ երբ նորագոյն պեղումները կը փորձեն զբաղմունքն նպաստել այս քիչ մը խորհրդաւոր հարցերու լուսարանու- թեան:

Երկու հաստատութիւններու նոյնու- թեան կապակցութեամբ հարկ է լրջօրէն նկատել հետեւեալ քանի մը պատմական երեւոյթները:

Ա) Եթէ Գլաձորի կրթական հաստա- տութիւնը, ինչպէս կ'ընդունուի, տարե- կան շուրջ 350 աշակերտներ ունէր, հարկ է եղբայրացնել ուրեմն, որ այդքան ա- շակերտի համար, աւելցնելով նաեւ անձ- նակազմ եւ դաստիարակ - ուսուցիչներ, անհրաժեշտօրէն հարկաւոր էին ընդար- ձակ բնակարաններ՝ փրկեց օժանդակ կա- ոռյցներով. սակայն Գլաձորի ներկայ աւերակները չեն բաւարարեր այդ պա- հանը: Կը խորհինք թէ Գլաձորը, եթէ ունենար այդքան ծաւալուն համալիւր, հեշտօրէն չէր կրնար անյայտնալ, մա- նաւանդ Գլաձորի նման խոշոր հաստա- տութեան մը կառուցուածքը: Վկայ են վանական ուրիշ հաստատութիւններու աւերակները:

Բ) Նկատել Գլաձորի եւ Թանահատի վանքերուն տեղագրական մերձակոյսը, ինչպէս ինքի վերջին թիւնը, եւ Թանահատի շուրջ՝ վերջին թիւնը, եւ Թանահատի վանական պեղումներով յայտնաբերուած վանական խուցերը, ընդարձակ աւերակները, Թա- խուցերը, ընդարձակ աւերակները, Թա- խուցերը, քարէ տաշտերը, սանդղին ու նիւնները, քարէ տաշտերը, սանդղին ու նիւնները (հմտ. նաև Թ. ՅԱԿՈԲՅԱՆ, հորբը (հմտ. նաև Թ. ՅԱԿՈԲՅԱՆ, Սովետա- Ս. ԲԱՆՇԵԱՆ, Ա. ՍԵԿՈՑԵԱՆ, Սովետա- կամ Հայաստանի տեսարժան վայրերը, Երեւան 1959, էջ 165, հրա. Երեւանի Գետական Համալսարանի: Թ. ՅԱԿՈԲՅԱՆ Պետական Համալսարանի: Թ. ՅԱԿՈԲՅԱՆ (Խմբագիր), Սովետական Հայաստան (Հայրենագիտական ուրուագիծ), Երե- (Հայրենագիտական ուրուագիծ), Երե- ւան, 1967, էջ 150: Ի. ՂԱՐԻԲԱՆ, Գլաձորի Համալսարանի հիմնադրուած վանքի Համա- պեղումները, Քաներ Երեւանի Համա- լսարանի, 1971, Թիւ 2, էջ 251-260:

Գ) Նկատել որ Գլաձորի հիմնադրու- թեան թուականը կը տուգադրուի Թանա- հատի վերանորոգութեան աւարտումի թուականին հետ (1279-1280):

Դ) Երկու վանքերու պատմական յի- շատակագրութիւններուն մէջ ալ կը մէջ- ուին Սուրբ Ստեփանոսի նուիրուած ե- կեղեցի կամ մատուռ:

Ե) Թանահատի շուրջ գտնուող գե- րեզմանաբերութիւնները, որոնք նոյնիսկ կարգացուին անուններ, որոնք ինչպէս ժամանակագրականօրէն՝ դրեթէ կը նոյ- նանան ա՛յն անուններուն հետ, որոնք զբաւոր վկայութեամբ, ուղղակիօրէն

կ'առնընդունին Գլաձորի գործունեություններն հետ:

Ա) Ստեփանոս Օրպելեան պատմիչը, Գլաձորի աշակերտ եւ յաջորդաբար Միւնիքի նահանգին Մետրապոլիտ, երբ իր ընդարձակ թեմին հռչակաւոր կրօնական հաստատութիւնները կը թուարկէ իր պատմական երկրին մէջ, Տաթևի վանքէն անմիջապէս յետոյ՝ կը դասէ թանահատի հաստատութիւնը. իսկ ինչո՞ւ եւ ի՞նչ պատճառներով չի յիշատակեր Աղբերց կամ Գլաձորի նման հանրածանօթ կրթական կեդրոն մը:

Ե) Աւելցնենք նաեւ սա պարագան. զոյգ մենաստաններ, Գլաձորն ու Թանահատը, տեղադրական գետնի վրայ իրարու շատ մօտիկ վայրերու մէջ դնուելով, անկարելի է որ փոխադարձ սերտ գործակցութիւն չունենային մշակութային-կրթական գիծի վրայ: Նման ենթադրութիւն մը մերժել՝ հակատրամաբանական պիտի ըլլար:

Այս բոլորը աչքի առջեւ ունենալէ յետոյ, ինչո՞ւ տրամաբանական գետնի վրայ կարելի պիտի չըլլայ հետեւցնել, որ եթէ նոյնիսկ սկիզբէն չէ, գոնէ գործունեութեան վարձ չըջանէ մը ետք, Գլաձորի կրթական Դպրոցը՝ Թանահատի հաստատութեան մէջ շարունակուած ըլլայ (Գլաձորը ունեցած է գործունեութեան 50-80 տարուան շրջան մը): «Այս վանքի պատմութիւնը, կը գրէ զարմանքով Գ. Կթղ. Յովսէփեան, տարօրինակ սկիզբ եւ վախճան ունի: Անյայտութիւնից յանկարծ երեւան է գալիս ԺԳ. դարի ութնական թուականի սկզբում՝ իբրեւ Արեւելեան Հայաստանի մտաւոր կեդրոնը, եւ յանկարծ չքանում անյայտութեան մէջ ԺԳ. դարի կէսին: Անորոշ է նոյնիսկ տեղը. այն աւերակները, որոնք Գլաձորի մնացորդները պիտի լինին, չնչին են, նիւթի հետ կապ չունեցող եւ ոչինչ չլուսաբանող երկու արձանագրութեան բեկորներով» (Խաղբալեանի կամ Պաշտման, էջ 251):

Հարցը, անշուշտ, կը մնայ ենթադրութեան շրջածիրին մէջ միայն. ենթադրութիւն մը, սակայն, որ առաւել

լազոյն չափով կը դուրսցնէ ու կը լուծէ պատմական շատ մը հարցականներ եւ պահանջներ:

Այս կէտին, իրաւունքն սեղանի վրայ կը դնէ ուրիշ վիճելի հարցական մըն ալ, երբ կ'առարկէ թէ Թանահատի վանքը Գլաձորէն բոլորովին տարբեր նկարագիր ու բնոյթ ունեցած ըլլայ: Իր այս վարկածը կը հիմնուի Ստ. Օրպելեան պատմիչին ա'յն բացատրութեան վրայ, ուր կ'ըսուի թէ Թանահատի միաբանները «մշտապաշտօն» էին: Այս եզրը ուրիշ բան չի նշանակեր, եթէ ոչ միշտ աղօթող եւ կը համապատասխանէ յունական Ἀσκητικός բառին, որուն իմաստն է ամբողջ. յունական այդ եզրին մէկ փոփոխակն է մեր ակումիտ բառը, որուն իմաստը այսպէս կը բացատրէ Նոր Հայկական Բառարանը. «Որ եւ Անհանգստից վանք. այն էր կարգ միանձնաց անհաղար աղօթողաց զցայդ եւ զցերեկ փոփոխ պաշտամամբ, ուր էր եւ վարժարան իմաստութեան, ուստի ելանէիմ մեծամում բարումի կամ մեծիմաստ վարդապետ» (ընդգծում մեզմէ): Խաչերեան հիմնուելով, ուրեմն, Օրպելեանի «մշտապաշտօն» արտայայտութեան վրայ, ասոր կցելով նաեւ այն ենթադրութիւնն ալ թէ Թանահատի մէջ ԺԳ-ԺԳ շրջանին վախճանած «բոլոր անձնաւորութիւններն էլ եղել են սոսկ քահանաներ, որոնք, ինչպէս յայտնի է մեր դպրութեան պատմութիւնից, ունենալով տարրական նախադիտելիքներ, կոչուած էին կրօնա-ծիսական արարողութիւններ կատարելու միայն, եւ վերաբերութիւն չունէին դիտա-ուսումնական գործունեութեան հետ» (էջ 16-17), կը հասնի սա անսպասելի եզրակացութեան. «Թանահատը եղել է բացառապէս հոգեւոր-կրօնական կեդրոն, որում ի սպառ բացակայել է ուսումնագիտական կեանքի մշտնջամ (էջ 18, ընդգծում մեզմէ): Խաչերեան նման եզրակացութեան մը յանգած է, արդեօք Գլաձորի՞ հանգամանքը ցայտուն դարձնելու համար. չհասկցանք, որովհետեւ նոյն էջին մէջ, երկրորդ անսպասելի եզրակացութիւն մըն ալ կը հանդիպի մեր աչքերուն, այս

անգամ, սակայն, Գլաձորի կապակցութեամբ, երբ կը գրէ՝ թէ Գլաձորը եղած է «բացառապէս ուսումնագիտական կեդրոն»:

Հայ վանականութեան պատմութիւնը կը վկայէ թէ վանական կեանքի նկարագիրը կը տարբերէր հաստատութիւնէ հաստատութիւն. կ'ընդունինք նաեւ որ Թանահատի միաբանները ունեցած ըլլան խստակրօն նկարագիր մը, սակայն պատմական ինչ ապացոյցի վրայ կարելի է հիմնուել, արմատապէս մերժելու համար նոյն վանքէն կրթական կամ գումարեւանական կեանքի նշոյլն անգամ: Նոյնիսկ, եթէ երկու հաստատութիւններու նոյնութեան ենթադրութիւնն ալ վերջնականօրէն մերժուէր, դեռ տարակոյսէ վեր կը մնար, անշուշտ, Գլաձորի մշակութային գործունեութեան գերակշիռ հանգամանքը. սակայն Թանահատի մէջ ընդօրինակուած գրչագրիչներու սակաւթիւ ըլլալը, կամ ԺԳ-ԺԳ. շրջանին հոն մահացած կամ թաղուած անձնաւորութիւններու սոսկ քահանայ (ո'չ վարդապետ) ըլլալը (վերապահ ենք այս մասին), կը բաւէր իրաւասութիւն տալու մեզի՝ վերջնականօրէն վճռելու Թանահատի մշակութային կամ կրթական գործունեութեան ծաւալն ու քանակը (մանաւանդ թէ Թանահատի մէջ ընդօրինակուած գրչագրիչներու սակաւութիւնը՝ չի՞ կըրնար միթէ դեռ աւելի ուժեղացնել Գլաձորի եւ Թանահատի նոյնացումին համակարգ ենթադրութիւնը): Ա. Ս. Մովսիսեան, առանց իր աղբիւրը մատնանշելու, կը գրէ որ յայտնի է թէ Թանահատի վանքը ե'րբ դպրոց ունեցեր է, սակայն «մի բան գիտենք, որ սկսած ԺԳ. դարից՝ ժամանակակիցները յաճախ յիշում են նրան որպէս յայտնի վանքի եւ գումարեւանատեղի» (Այստեղ կային «առաջնորդներ» եւ հմուտ գիրիւստիներ», որոնք յիշում են իրենց աշակերտների կողմից (ՅԻՂ. ԳՐԺ, էջ 276): Ուրեմն...

Եթէ ընդունինք որ Թանահատը զուտ կրօնական կամ ճգնողական կեանքի նշանակութեամբ հաստատութիւն մըն է եղած, սակայն հաստատութիւն մըն է եղած, ուրեմն տրամաբանօրէն պէ՛տք է ընդուն

նել նաեւ որ անկէ մշակութային կամ կրթական գործունեութիւն չէ ունեցած: Իայց մեր վանական հաստատութիւններէն ո'ր մէկը արդեօք զուրկ է եղած նման գործունեութեան մը ընդհանուր նկարագրիչն ու մասնապէս, անհեթեթ պիտի նկատուէր պնդել թէ Միջին դարուն, մեր մօտ եղած են վանքեր, ուր հաւաքուած ըլլան միայն քահանաներ (եւ ո'չ վարդապետներ):

Անցնելով Գլաձորի վանքին, վանք մը՝ որ իրաւունքն Թանահատի ճիշտ հակապատկերը կը նկատէ իբր զուտ գումարեւանատեղական կեդրոն, առիկա նախ եւ առաջ կրօնական հաստատութիւն մըն է (վ'ընդգծենք): Եթէ ընդունինք իրաւունքն այդ աննախընթաց եզրակացութեանի այդ աննախընթաց եզրակացութեանը, պէտք ենք ընդունել նաեւ թէ Գլաձորի մէջ կատարուած չեն ամէնօրեայ ժամերգութիւններ, պատրաստուած չեն հոն եկեղեցական արարողութիւններու ու ծիսակատարութիւններու հմուտ սպասուորներ: Մեր վանականութեան պատմութեան դէմ գործուած խոշոր մեղանշում մը կրնայ նկատուիլ, եթէ ընդունուի նման անհեթեթ ենթադրութիւն մը, որովհետեւ վանական մեր բոլոր հաստատութիւնները — եւ Գլաձորը ամէնէն առաջ վանական հաստատութիւն մըն էր — եղած են, առանց բացառութեան վանք — կրթական կամ կրօնական կրթական: Վանքերէ կամ կրօնական կրթականներէ անկախ դպրոց, գումարեւանատեղական մեզի, գոյութիւն չէ ունեցած մեր միջնադարեան բոլոր պատմութեան մէջ:

Այս հարցերը լուծելիս յետոյ, 18-42 էջերուն մէջ, Հեղինակը կ'անցնի խօսելու ներքեւ Տարօնցի կամ Մեղի վարդապետի մասին՝ իբրեւ հիմնադիր Գլաձորի հաստատութեան. ապա կ'անցնի թուարկելու ա'յն աղբիւրները, որոնք վկայութեան վրայ հիմնուած՝ կը հաստատեն թէ Գլաձորը հասարակ մենաստան տատէ թէ Գլաձորը հասարակ մենաստան մը չէր, այլ ուսումնադրական բացառիկ կեդրոն մը, ուր փոքր զայն նոյնիսկ հեռաւոր քաղաքներէ, մտային վերելքի հետաւոր քաղաքներէ, մտային վերելքի սիրահարներ, իրենց ուսումը կատարելագործելու եւ վարդապետական աստիճանի տիրանալու համար (էջ 49-72):

Պարտք կը նկատենք նշել հոս, թէ Հեղինակը, պարտադրաբար թէ ոչ՝ չենք գիտեր, տարամերժօրէն Մարքս - Էնկելս- սեան վարդապետութեան տեսանկիւնէն կը դիտէ ու կը մշակէ այս նիւթը: Ան- հրաժեշտութիւն կա՞ր արդեօք նման գե- ղեցիկ ու գնահատելի աշխատանքի մը մէջ՝ իրր անվրէպ ուղեցոյց ընտրել Մարքսի եւ Էնկելսի փրկութիւնական վարդապետութիւնը: Վերոնկան ձեռ- տռմանն ունեն իրենց բացատրութիւ- նը»:

Փ. Էնկելսի այս արտայայտութիւ- նը իբր նշանաբան առնելով է որ Հեղի- նակը ընդառաջ կ'երթայ ու կը մօտենայ հարցին: Թէեւ, անկասկած, կրօնական երեւոյթները, զանազան տեսակէտներու ներքեւ, ունին անբաժանելի մը տնտեսա- կան-ընկերային ենթակառոցին հետ, սակայն կը խորհնք թէ կարելի չէ կրօ- նական երեւոյթը, իր ամբողջութեան մէջ, բացատրել միայն ընկերային-տն- տեսական աւ կամ զուտ երկրաւոր կարգի յեղաշրջումներով: Ուստի գովելի կը նկատենք Հեղինակին փափաքը, Գլաճորի երեւոյթը զետեղելու դարուն ընկերային- քաղաքական շրջաժիրին մէջ, բայց կը խորհնք թէ կը հեռանայ ողջմտութեան սահմաններէն, երբ հետեւելով դարձեալ Էնկելսի ա'յն արտայայտութեան թէ «Հասարակական և քաղաքական ամէն մի շարժում հարկադրուած էր կրօնական ձեւ ընդունելու», կը պնդէ ու կը հաս- տատէ թէ «Մասսաների զգացմունքները սնուցին բացառապէս կրօնական կերա- կրով. այս պատճառով, փոթորկալի շար- ժում առաջացնելու համար՝ անհրաժեշտ էր, որ այդ մասսաների սեփական շա- հերը նրանց ներկայացուէին կրօնական հագուստով» (էջ 203-204):

Իսկ թէ իր կողմէ տարամերժօրէն որ- դեգրուած այս իբրեւ «լուսարձակ եւ ուղեցոյց» դրոյթները ո՞ր կ'առաջնորդ- դեն զինքը, կարելի է գուշակել: Ամէն

պարագային, շատ ընդարձակ ըլլալով այս նիւթը, կը մնայ դրախօսականի մեր սահմաններէն դուրս:

Գլաճորի նման կրթական ակուսի մը նուիրուած այս արժէքաւոր մենագրու- թիւնը, կը պահանջէր, իսկապէս, գե- ղեցկազոյն տպագրութիւն մը, իր թուղ- թով, էջաւորումով եւ հանդերձանքով: Նման պատմական հրատարակութեան մը մէջ, թող ներուի մեզի յիշեցնել, ան- հրաժեշտ կը թուի մանաւանդ, եթէ կա- րելութիւններ կան բնականաբար, լու- սանկարներու ճոխ արտատպում մը՝ քննարկուած վանական հաստատութիւն- ներուն, անոնց ներկայ վիճակին, ծաւա- լին, եւ թերեւս նաեւ անոնց չափադրու- թիւններուն: Խաչքերանի հատորը զուրկ է դժբախտաբար այս բոլորէն:

Հատորին մէջ լաւ պիտի ըլլար տես- նել նաեւ զանազան համեմատութիւններ՝ Միջնադարեան հայ կրթական ուրիշ ծա- նօթ կեդրոններու հետ: Այս աշխատան- քը, ո՞րքան որ ծանր, նեղացուցիչ եւ ծրագրեր ընդլայնող դորձ մը կրնայ ե- րեւիլ, նո՛յնքան ալ սակայն անհրաժեշտ- տութիւն մը կը թուի, Գլաճորի նման բարձրագոյն ուսումնարանի մը պատշաճ դիրքը աւելի ցայտեցնելու համար՝ հայ դրական-դաստիարակչական պատմու- թեան մէջ: Փափաքելի պիտի ըլլար, դարձեալ, տեսնել եւ գրեթէ չօջափել թէ Գլաճորը, իր բոլոր առանձնայատ- կութիւններով եւ առաւելութիւններով, ի՞նչ եւ ո՞րքան ազդեցութիւն ունեցած է յաջորդաբար ծաղկող կրթական կարե-ւոր կեդրոններու վրայ: Խաչքերանի դորձը՝ հայագիտական արժէքաւոր ձեռ- նարկ մըն է, անտարակոյս, որու հրա- տարակութեան առիթով, մեր ջերմ շը- նորհաւորանքը եւ գնահատանքը վաստա-ւոր Հեղինակին, որ անշուշտ պիտի չու- շանայ ձեռնարկելու Միջնադարեան կըր- թական ու բիշ հաստատութիւններու պատմութեան:

Հ. ՏԱՃԱՏ ԵԱՐՏԸՄԵԱՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆՔ

ԱՃԵՄԵԱՆ ԻՐՄԱ. - Տալ միայն: Իս- թանպուլ, Վոսպիլ» հրատարակչատուն 1975, էջ 190:

ԱՆԴՐԵԱՍԵԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ. - Երկար գե- լերին մէջէն: Լոս Անճելոս 1974, տպ. «Ատլաս», Պէյրուս, էջ 400:

ԱՆԵԼ. - Որդի Մարդոյ: Երուսաղէմ, «Ս. Յակոբեանց» տպ. 1975, էջ 360:

ԳԵՂԱՄ-ԳԵՂԱԿ. - Հայկական նոր դե- ցարանութիւն, Ա. հատոր: Պէյրուս, «Համադպայի» տպ. 1971, էջ 240:

ԳԵՂԱՄ-ԳԵՂԱԿ. - Հայկական նոր դե- ցարանութիւն, Բ. հատոր (Երգ-երգ- դոցս): Պէյրուս, «Տօնիկեան» տպ. 1974, էջ 208:

ԳԵՂՈՐԳԵԱՆ Պ. (Կազմեց). - Ժան-Ժազ Ռուսո, Կեանքը: Լոս Անճելոս, «Նոր Օր» տպ. 1976, էջ 116:

ԴԵԼ. - Սրտի ձայնը (Բանաստեղծու- թիւններու ժողովածու, Գիրք Եր- րորդ): Թեհրան, «Նայիրի» տպ. 1974, էջ 313:

ԵՂԻՇԷ. - Վասն Հայոց Պատերազմի (Պատմութիւն Հայոց), Բ. տպագրու- թիւն: Երուսաղէմ, «Ս. Յակոբեանց» տպ. 1968, էջ 194:

ԵՂԻՎԱՐԴ. - Ընտիր էջեր: Երուսաղէմ, «Ս. Յակոբեանց» տպ. 1973, էջ 255:

ԵՂԻՎԱՐԴ. - Օտարականը: Երուսաղէմ, «Ս. Յակոբեանց» տպ. 1968, էջ 218:

ԶԱՐԵԱՆ ԿՈՍՏԱՆ. - Երկեր (Մեացորդը եւ իր ճամբան, Արեւմուտք, քաղաքներ - Խմբագրութիւն Պօղոս Մնացեանի): Անթիքիս, Տանն Կիլիկիոյ տպ. 1975, էջ 643:

ԶՕՐԵՆՑ ՎԱՐԴԱՆ. - Հինք որ նոր պիտի ըլլայ: Պէյրուս, տպ. «Երեւան», 1975, էջ 86:

ԺԻՐԱՅՐ. - Լուս սրտի խօսքը: Թեհրան, տպ. «Անի», 1971, էջ 48:

ԽԱՆԵՆՑ ԳԱԼՈՒՍ. - Բարեւ զեզ, մա՛րա: Պէյրուս, «Յոյս» տպ. 1974, էջ 158:

ԽՕՇԻԿԵԱՆ ՎԱՐԴԱՆ Յ. - Մալկարայի հայ գաղութը (1610-1622 թուական): Հրատարակչատուն «Մամիկոն- Եան» Հայրենակցական Միութեան: Փլովտիւ, տպ. «Փարոս» լրագրի, 1943, էջ 162:

ԿՈԳԵԱՆ ՍԱՀԱԿ. - Մինչեւ ցե՞րբ, Տէր, մինչեւ ցե՞րբ: Պէյրուս, «Հմադ. Վ. Սէթեան» տպ. 1975, էջ 116:

ՀԱՅԷԶ. - Ա. Անարկ Հաֆէզի կեանքի, դարաշրջանի եւ ստեղծագործութիւն- ների վրայ: Բ. Գազելներ (Կազմեց եւ թարգմանեց՝ Ալիմ Գ. Մինասեան): Թեհրան, տպ. «Նայիրի», 1974, էջ 332:

ՄԱՆՈՒԷԼԵԱՆ ՍՈՒՐԵՆ. - Դպր. մը շա- քար: Երուսաղէմ, «Ս. Յակոբեանց» տպ. 1965, էջ 356:

ՄԱՆՈՒԿԵԱՆ ԱՐԲ. ԱՐՏԱԿ. - Վերանո- րոգումի հարցը Հանրային եւ մշակու- թային կեանքին մէջ (Մեկնութեամբ Աշոտ Բարոյեանի, ի յիշատակ Եղբոր իւրոյ): Թեհրան, «Նայիրի» տպ. 1976, էջ 48:

ՄԱՆՈՒԿԵԱՆ ՄՈՒՐԱՏ. - 101 քառակ- ներ հայերէն եւ անգլերէն: Երուսա- ղէմ, տպ. Ս. Յակոբեանց, 1973, էջ 109:

ՄԻՆԱՍԵԱՆ ԼԵՒՈՆ. - Ինչպէս տեսայ Ամերիկան. Բ. տպագրութիւն: Նոր Զուլա, «Ս. Ամենափրկիչ վանք» տպ. 1976, էջ 130:

ՄԻՆԱՍԵԱՆ Լ. Գ. - Պատմութիւն փե- րիոյ Հայոց Հիւանդանոցի 30ամեայ գոյութեան (1942-1972): Նոր Զուլա, «Ս. Ամենափրկիչ վանք» տպ. 1975, էջ 95:

ՈՍԿԵԱՆ Հ. ՀԱՄԱԶԱՍԳ (Խմբագրող). - Ցուցակ Զեռաբաց որ է «Հանդէս ամսօրեայ» (Հայկ. Մանր. Գ. Կիւլ- պէնկեան Հիմնարկութեան): Վիեննա, Միթ. տպ. 1976, էջ 480 (մեծադիր):